


280

6 IV. 2



ԲԱԺԱՆՈՒՄ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	
Տարեկան	12 Ձր.
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի համար	
Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար	
Տարեկան	3 ՏՐԴ.
Վեցամսեայ	1.50 »
ԳԱՆՈՒԹԻՎ ՎՃԱՐՆԵՐԻ	

Իրականացնան տոյսը ստացին երեսին համար 40 սանթիմ հ. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ հ. երեսին սակի սակազաններու համար 20 Օլլ զեղը կրոյալ :

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ԶՈՒՆՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՈՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկի ներկայությունն հասցեին

Редация на вестникъ «Шаржумъ» Варна Redaction du journal «Charjourn» Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռքի

Արտասահմանի ձեռքի (20 ՍԱՆԹԻՄ)

Պուշկարիոյ համար ձեռքի (15 ՍԱՆԹԻՄ)

ՄԱՅԱԳՈՅԺ

Խորին ցաւօք կը ծանուցանենք բոլոր իր ազգականաց, բարեկամաց եւ ծանօթներու թէ՛

ԳՐԻԳՈՐ ԷՖ. ԻՆԻԼԼԻԵԱՆ

յետ կարճատեւ հիւանդութեան, կնքած է իր մահկանացուն, 20 Յունուար 1901, ի ինքնամիտքի, ի խոր սուգ համակելով համայն իր գերդաստանը :

Կարապետ Փախազեանի Սգակիր ընտանիքը

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ԹՈՂԳԱՅ

Յաւէտ ողբացեալ թագուհին, իր հոգեվարքի անկողնին մէջ, վարը թափուած արեան ճապաղիքներու քսաննայի տեսիլներէն թերեւս մեծապէս զահանդած՝ կերկերուն ձայնով մը արտասանեց. «Թագազու թիւնը թո՛ղ գայ» : Թագուհին տեսաւ վերջերը սրտի ամենամեծ մորմորով բարոյական, նիւթական եւ անձերու մեծ ու անդարմանելի կորուստները, զոր պատճառեց եւ պիտի պատճառէ սակաւին վէս ու դուռ ու Արարչին պոչերական անհաւասար կռիւր : Տարիքի բեռէն աւելի՝ խաժակն ցեղին օրաւոր կոտորուելուն ու սրտահատոր թռնիկին վաղահաս մահուան բոթաբեր լուրերը բոլորովին դաւկացուցին Անգլիոյ երբեմնի վարդը, ու ցուրտ հողին յանձնել ցին վայն :

Շատ ու շատ հաւանական է, այդ զգացումի կիրն զղջումի տաք արցունքներ թափեց, ու լռիկ անէծքներ տեղաց միայնուցաւորին՝ Անգլո-Պոչերական կրուսին միակ ստեղծողին : Ու իր զղջումի պոռթկումին մէջ թերեւս արտասանեց «Թագազու թիւնը թո՛ղ գայ» : Գտնելի այս ժողովրդական վեհապետուհին ծայրայեղ տրամութեան մատնուած էր, կըսուի, վերջին ժամանակները :

Խինդն ու կսկիծը, հաճոյքն ու վիշտը մարդկային կեանքի օղակաւորումները կը կոչուեն անխտորբէն անցաւոր աշխարհի վրայ, անմխիթար թագուհին

կեանքը ուրախութեամբ սկսաւ, ու դառնութեամբ վերջացաւ :

Ամբողջ Անգլիա սուգի մէջ է առժամապէս, ու իրաց վիճակը՝ անստոյգ տակաւին : Էտուարդի հետեւելիք քաղաքական ուղղութեան մասին կարծիք մը չի յայտնեցին եւրոպական լրագրիչները :

Հասարակաց կարծիքը՝ որ Անգլիոյ մէջ ներքին ու արտաքին բոլոր գործերուն վարիչը կը համարուի, տեսնենք ո՞ր կողմը պիտի յարի. ուժ պիտի տա՞յ արդեօք միակնուցաւորին սկսած անհաւասար, անբարոյական կրուսին, որուն վերջնական նպատակը կամ աննպատակ էրը խոշոր արատ մը պիտի բերէ անգլիական մարդասիրական ոգին : Թէ՛ պիտի գիտնայ յարգել ողբացեալ թագուհին վերջին խօսքը, պատճառ ըլլալով ամենուն բազմացած արգար խաղաղութեան վերահաստատումին :

«Թագազու թիւնը թո՛ղ գայ» ձայնը կուգայ նաեւ վարէն, կրուսի դաշտէն, պոչերներու բերնէն, պայմանաւ որ Արարչին չի յանդգնի դպիլ իրենց անկախութեան, զոր այնքան ծանրածանր զոհողութիւններով ձեռք ձգեցին եւ որ այնքան սուղ նշուաւ ու թերեւս պիտի նստի սակաւին իրենց : Վասն զի հակառակ պարագային այր ու կին, մանուկ ու ծեր ու խտած են մինչեւ իրենց արեան վերջին կաթիլը զէնքը վար չի դնել :

Տես, ընթերցող, ի՞նչ կըսէ այդ անմեղանալի եւ խաժակ պատերազմիկներուն ահ ու սարսափ ալգոյ Տըվէթի կիրն եւրոպական թերթի մը թղթակցին :

«Պատերազմը սկսելէն ի վեր՝ մէկ անգամ տեսայ ամուսինս : Մեր տունը ու ագարակը քար ու քանդ եղան Անգլիացիներէն, ես՝ եօթը փոքրիկներովս տեղէն տեղ քաշկուտուեցայ, ո՛չ հագուստ ու կապուստ, ո՛չ ալ կօշիկ ունինք : Տունը, ուր կը բնակիմ առժամապէս բարեկամներս գրին իմ արամադրութեան տակ : Ինչ որ ալ ընեն Անգլիացիները, մենք՝ կիրներս պիտի յորդորենք

մեր ամուսինները որ երբեք տեղի չի տան :

Չունինք բնակարան. չունինք ուտելիք, չունինք ո՛չ մէկ բան, աղքատացած ու մերկացած ենք բոլորովին. բայց կուզենք կրուսիլ մեր անկախութեանը համար մինչեւ մեր վերջին շունչը : Ահա՛, անկախութեան պաշտելի գաղափարին այսքանի յամառօրէն փակած ժողովրդի մը ճակատագրին հետ կը խաղայ Անգլիա, նպասակ ունենալով շնչելու զայն վերջնականօրէն ազգերու շարքէն, լսկ իր ապագայ զձուձ շահերը պաշտպանելու մղձաւանջէն բռնուած :

Պիտի յաջողի՞ իր նպատակին իրագործման հասնիլ. թերեւս : Մակայն պատմութիւնը այդ «թերեւո՞ղ» մասնանիջ պիտի ընէ ապագայ սերունդին մարդասէր ու ազատամիտ կարծուած Արարչի բարոյական ամենամեծ անկումը :

ՀՈՒՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՕԼԻՍ, 28 Յունուար

Ընթերցող, երեւակայէ՛ վայրկեան մը, թէ քու աչքերդ ամենատես են, երեւակայէ նոյնպէս որ հրեշտակի մը (կամ սատանայի մը) պէս ելած են Երկնից բարձունքը եւ հեռուէն կը դիտուուշագիր աչքերով Ասլանտեան կամ Թաղաղական ովկիանոսի ամէն կէտերը, ամէն կողմերը : Է՛, ինչ կը կարծես, սիրելի ընթերցող, արդեօք ովկիանոսի այդ անհուն տարածութիւնը միշտ խաղաղ կը գտնաս, թէ միշտ ու է կէտի մը վրայ ալէկոծութիւն ու փոթորիկ անպակաս են :

Ես արամադիր եմ կարծելու որ կրնան պատահիլ օրեր ու նոյն իսկ շարաթներ որ վեհափառ ովկիանի ամէն կողմն ալ խաղաղ վիճակ մը ունենայ :

Իսկ Թուրքիա՞ . . . Օ՛ր ան տեղի գէջ է, քան հեղուկ տարրը քան տնկայուն ու ալեկոծ ջուրն ու ովկիանը : Թուրքիա Ովկիանէն ալե-

կոծ է, տարուան մէջ օր մը, ժամ մը, վայրկեան մը չի կայ որ Թուրքիոյ ու է մասին մէջ փաթառ մը, խտանակութիւն մը, սպաննութիւն մը, զինեալ դիմադրութիւն մը չըլլայ :

Անցեալ նամակովս հաղորդած էի Մշոյ դաշտի պատահարները, այսօր կուգամ Արարչի այլանդակութիւնները արձանագրելու :

Աս յունուարի կէսերուն ապստամբ ալպանները կը յարձակին Տիպրայի գայմազուսին վրայ, կառավարութեան քոնակը կը գրաւեն, գայմազամ, փոլլուսամէնն ալ կը փախցնեն եւ տէր կը գառնան քաղաքին : Մինչեւ Մանասթրէն զօրք կը հասնի, ալպանները բաւական կողոպուտ առնելով կը նահանջին, եկած զօրքը կը յաջողի երեք հոգի ապստամբներէն բռնել եւ Տիպրոփոի բանտը բանտարկել, բայց կատղած ալպանները կը յարձակին օր ցերեկով բանտի վրայ, պահապաններէն երկու հոգի կը սպաննեն շատ մը կը վիրաւորեն ու իրենց ընկերները կազմուեն : Իշտէ սս ալ ձեզի «պետութիւն» :

Ամսոյս 20ին գետպաններու խորհուրդ մը տեղի ունեցաւ, խորհրդակցութեան նիւթը գաղտնի չէր, ամէն քարտուղարները գիտէին եւ հաղորդեցին խորհուրդը միայն մէկ նիստ չունեցաւ, այլ քանի մը նիստեր եւ մինչեւ օրս ալ գեւ կը շարունակուի : Խորհրդակցութեան նիւթն էր թուրք-հելլէն յարաբերութիւնները 1897 պատերազմէն ծագած խաղաղութեան գաշնազիրը :

Թուրքիա իբր յաղթող (վա՛յ գլխուդ Հ. . .) կուզէ իրեն կամքը թելադրել Քունատտանի կուզէ յունական գետպանը եւ հիւպատոսները պուլկարներուն պէս իրաւաւորկ ընել, կուզէ յունական հպատակները իրեն բանտը տանիլ, զրկել հիւպատոսները միջամտելու իրաւունքէն : Մէկ խօսքով չուզեր որ «Գաբիդիւլա-

սիօն» ըսուած խայտառակութեան կնիքէն յոյն ալ օգտուի :

Իսկ յոյները կը պահանջեն, որ իրենք ալ օգտուին այդ դաշնագրի իրենքէն, ինչպէս եւրոպական ամէն պետութիւնները :

Համաձայնութեան չի կրցին հասնիլ յոյն և թուրք պատուիրակները և կառայարութիւնները : Բայց 1897ին նախնական դանշագրի 15րդ յօդուածը կըսէ որ «անհամաձայնութեան պարագային» Պոլսոյ մեծ պետութիւններու գետնային սահմանները պիտի ըլլան միջնորդ գաւառներ : Ահա այժմ այդ գաւառները պաշտօնէն որ կը տանին գետնային սահմանները :

Մեծ մարգարէութիւն մը կամ հանճար մը պէտք չէ ունենալ գուշակելու համար, որ պետականներու ժողովը վերջապէս խնդիրը պիտի լուծէ յօդուած յոյներու, թէեւ Պիղմարգի զաւակ Պատօն Մարշալ Ֆօն Պիպէռտայն պիտի հոգուի սրտով ջանայ թուրքերու կողմը քաշել օգուտը :

Փոքրիկ միջադէպ մը :

Ահա շարժում մըն է Բաղէշի գաւառէն հոս եկած ամէն հայերը ահ ու գողի մէջ են : Ոստիկանութիւնը կործնէ Բաղէշի Գրիգոր անուն անձ մը . . . Գրիգոր շատ է Ատկէ ալ սովորական հայու անուն : Ո՞րն է որոնածները, ոստիկանները իրենք ալ չեն գիտեր : Ամէն Գրիգորները տարին, 2—3 օր բանտը պահեցին, հարցուցին, ստակ քաշեցին և արձակեցին :

Բաղէշի Գրիգոր . . . սարը-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Օ Գ Տ Ա Կ Ա Ր Ե Ի Հ Ա Ր Կ Ա Ւ Ռ Ի Է Ա Ր Գ Ե Ռ Թ Ի Ա Ն Ն Ա Ն Ո Ւ Ք Ն Ն Ո Ւ Թ Ի Ն

1

Այժմ կարող է հարց ծագել, թէ քննութիւնները ոչնչանալով ինչպէս կարող է հոգաբարձութիւնը կամ հասարակութեան իւրաքանչիւր անդամ ծանօթանալ զպրօքի սան-սանուհիներին յառաջադիմութեան հետ : Սրա համար էլ մանկավարժական ժողովը 1898—99 ուսումնական տարւոյ սկիզբից մինչեւ այժմ զանազան ժամանակներու ծնողներին ու խնամակալներին ժողովի է հրաւիրել, շատ կարեւոր խնդիրները հետ միասին խորհուրդ է աւել օրական դասերին ներկայ գտնել : ամեն ըրպէ զպրօքի գոնեւրը բաց են հասարակութեան տան մի անհատի առջ, այս կերպ աւելի ճիշդ գաղափար ու հասկացողութիւն կարող են կազմել զպրօքի յառաջադիմութեան մասին, քան քննութիւնները ժամանակ, երբ ամեն բան զբոյս կողմից սլաղած ու

ճիշդէլի մէհմէտ աղա, եկուր ու գտիր :

Ճէֆիկ պէյի հստած ուղեղը (հոտած հակիթէն ալ վատթար) միայն կրնայ ատանկ հանճարեղ սատանայութիւններ խորհիլ :

ԲԱԺ

Մ Ո Ւ Շ, 25 Դ Ե Կ Ն Ե Ր Ե Ր

Հօրեղբայր, մինչեւ 90 թուականները մեր բազմամարդ գաւառին մէջ 2000ի չափ պանդուխտներու թիւ մը կը համարուէր, որոնք տեղւոյն անտանելի պայմաններէն ստիպուած կը գաղթէին օտար երկիրներ, քիչ մը ստակ հասցնելու և պայանական օճախը չէն պահելու համար : Առաջին տարիները 5—10,000 օսմանեան ոսկի կըրնային հասցնել իրենց ընտանիքին «տիպար» բոլիսաճիններու միջոցաւ :

Իսկ 1895—96 թուականներէն սկսեալ կամաց կամաց մեր պանդուխտները հետզհետէ մոռցան իրենց սիրականները որոնցմէ բաժնուելու ատեն հաղարտոր հաւատարմական երգումներ սուած և մէկ մէկու խօստացած էին երբեք ուխտագրութ չըլլալ և ջանալ օր առաջ վերագտնալ զիրենք սպասող բազուկներու մէջ :

Հօրեղբայր, այդ ուխտերը սուրբ էին երբեմն հայ գիւղացիին համար : Իսկ այսօր կը անսնենք որ առանց բացառութեան մեր պանդուխտ եղբայրները, իրենց յարգած ու պաշտած ուխտերին ոտնակոխ ըրին, մոռցան

հայրենիք, պայանական օճախ, կին ու զաւակներ, որոնք մերկ անօթի անպատու պար մնալով ինկած են օտարին դուռը, պատառ մը հաց մուրալու համար : Իսկ իրենք օտարութեան մէջ տեղական բարքերու հետ շփուելով, փոխանակ լատագոյնին հետեւելու անբարոյականութեան մէջ կը թաւալին, գերի դարձած են օղի ու գինիի բաժակներուն, և առանց մտաբերելու անտէր անտէրունջ օճախը, անխղճօրէն կը մսխեն իրենց վերջին սանդիմը, չեն լսեր կամ չի լսել կը ձեւաձնեն թէ՛ ինչպէս Ռուսը կաթուղիկն ու բողոքականը կուխներ կը մղեն մեր հայրենիքի մէջ, պատառ մը հացով մեզ որսալու համար, կուզեն ջնջիլ այն լուսաւորչական եկեղեցին որ 1400 տարիներէ ի վեր հայու գոյութիւնը պահպանած է. տաճիկն ալ մեծ տէրութիւններու շահատակութիւններէն օգտուելով սրով ու սովով բնաջիւնջ ընել կուզէ մեզ, իսկ մեր գաւառացի պանդուխտ եղբայրները ամենայն անտարբերութեամբ կը շարունակեն իրենց զեղխութիւնը : Ամօ՞թ ձեզ բացէք ձեր աչքերը տեսէք որ ոչ մէկ սրբութիւն չէ մնացած հոն : մինչեւ ե՞րբ պիտի կրէք անպատուութեան կնիքը ձեր ճակատին, ձեր անմեղ կիները ու զաւակները վրէժ կը գոռան. աշխարհը սառսռեցաւ երբ լսեց մեծ մարգարայանին կողմէ մեզ դէմ կատարուած եղեռնագործութեանց շարքը ու մարդասիրական միջոցներու գիմեց : Իսկ դուք մինչեւ ե՞րբ անտարբեր պիտի մնաք : Հերիք է ալ, գութ

ուներէք, յիշեցէք ձեր լալազին կիներն ու զաւակները թողէք այդ անտարբերութիւնը և թէ քիչ մը վրէժխնդրութեան ու արժանապատուութեան ոգի կայ ձեր մէջ : ՄՇԵՅԻ

ՏՕՊՐԻՉ, 24 Յունուար

Տօպրիչ հագիւ 70—80 տունի չափ հայ ունի իր մէջ, որոնք թէեւ ազգային խնդիրներու տեսակետով քիչ մը անտարբեր են, և սակայն իրենց հաւատքին ու եկեղեցական ձեւերուն նախանձախնդիր ու հաւատարիմ մնացած են ցարդ :

Բայց վերջին գաղթականութիւնը քանի մը բողոքական ազգայիններ ալ սակողմերը նետած էր, որոնք ինքզինքնին առանձին տեսնելով մեզ հետ խառնուեցան, և մենք իրրեւ կրօնական ստեղծութենէ հետեւ անհատներ : սիրով ընդունեցինք զիրենք : Բայց դէպք մը վերջերս բոլորովին պաղեցուց մեզի :

Բողոքական հայ մը, կինը մեռնելով, ամուսնացաւ լուսաւորչական օրիորդի մը հետ : Պատկոյ թանկան, որուն յայտնուած էր այդ մարդուն թունդ բողոքական մը ըլլալը, առանց օրինական խոստովանանքի ու հաղորդութեան, պատկեց զայն հակառակ կէրպ մը ազգայիններու իրաւացի բողոքին :

Մինչեւ հոս աղէկ : Բայց ահա թէ վերջէն ի՞նչ պատահեցաւ :

Լուսաւորչական աղջկան մը հետ պսակուելու համար մեր ձեւերուն հաւատարմող այդ մարդը, ի հեծուկս մեր միամտիս քահանային, յետոյ, փառաբարպէս ժողովարան գիմած եւ պատուելիին աղօթքն ու օրհնութիւնը խնդրած է :

Այո՛, իրաւ է թէ մենք կաթուղիկ կամ բողոքականի խտրութիւն չենք գնիր, և սակայն երբեք թոյլ ալ չենք տար որ, մեր զարաւոր ձեւերն ստանկ անձերու խաղաղք գտանան :

կողմած է : Ուսումնական տարւոյ վերջանալուն մօտ՝ գրաւոր յայտարարութիւններով զպրօքական վարչութիւնը դարձեալ հրաւիրում է հասարակութեանը օրական դասերին ներկայ գտնել : Որպէս օրինակ մէջ բերեմ տեղեկագրից հետեւեալը. — 1898—99 ուսումնական տարու մ երկուսեա յաճախողներ եղել են 129 հոգի, որոնք լսել են 170 դաս. գրեթէ նոյնչափ էլ եղած են 1899—1900 ուսումնական տարու մ : Հասարակ կամ օրական դասերին ներկայ գտնուողները համեմատաբար աւելի որոշ ու ճիշդ գաղափար են կազմել զպրօքի ուղղութեան, աշակերտ-աշակերտուհիներին յառաջադիմութեան մասին, քան եթէ ինչ որ քննութիւններ լինէին :

Թւանշաններ տալ աշակերտ-աշակերտուհիներին, թւանշաններով ձգտել նրանց մէջ հետաքրքրութիւն դարձնելու, աշխատել թւանշաններով սպառնալ շտրվողին և կամ անգետները ընդունակ ու սովորող անհատին, սրանից էլ անմիտ բան չի կարող լինել : Մեզանից ամեն մէկը այդ բանը կը խոստովանի և մատերի վրա կը հաշիլ փեռաները, որ թւանշանները զպրօքականներին մէջ փոխադարձ ստեղծութիւն են առաջ բերում, նրանց մէջ մտցնում են թւա-

նշանի համար սովորելու վատ հակումը և թւանշանի համար առանց հասկանալու անգիր անելու վնասակար ուղղութիւնը : Ի՞նչու մն է թւանշանների օգուտը, ի՞նչու մն է նրա գործնական կողմը. — յայտնի չէ : Վնասի մասին շատ է խօսել, հետաքրքիր էր թւանշանների անհրաժեշտութիւնը ընդունողների կողմից լսել՝ հէնց թէ կուզ ստիպուած լինելուց՝ թէ ի՞նչ օգուտ ու առաւելութիւններ են ներկայացնում թւանշանները. թո՞ղ սպառնուանեն, գուցէ դա մի մեծ բարութիւն կը լինէր :

Հիմա ըստ ինքեան հարց է առաջ դալիս, թէ ի՞նչ նպատակի են ծառայում քննութիւնները. — Գննութեան կուսակիցները եւ կամ ստիպուած նրա դրութիւնը ժամանակաւորապէս ընդունողները. ի՞մ կարծիքով, միարեան պիտի վկայեն, թէ քննութիւններն են, որ ստիպում են զպրօքականներին իրանց սովորածը կրկնելու, ամփոփելու եւ ամբողջացնելու : Երբէք չեմ կասկածում, որ քննութեան կողմնակիցները դարձեալ մատի վրայ կարող են հոշել այդ դրութեան վնասակար կողմերը. լարւած վիճակ, հոգեկան անհանգստութիւն, մօտ 4—5 շաբաթ եւ գուցէ աւելի պարսպակ ու մտածել

թէ ի՞նչպէս կանցնեն քննութիւնները, իր բաղդը դէպի որ կողմը կը թեքուի. այս յուզող գրութեան վրայ աւելացրած վատ սննդաբուութիւն եւ ուրիշ աննպատակ պայմաններ՝ զպրօքականներին առողջութիւնը մաշում, քայքայում են, դարձնում են նրանց ջղային եւ կաս աւելի սաստկացնում են նրանց ջղայնութիւնը. այս է այդ բոլորի օգուտը, հա՞, եթէ պիտի ասեն, թէ տարեկան աշխատանքն է վճարական դեր կատարողը, հապա էլ ինչացու են քննութիւնները, ըստ ինքեան ձեւակարան րան կը լինին. ձեւակալութեան համար այդքան ճնշել, եւ դա՛ ի՞նչ խիղճ է : Այդ տեսակները թո՞ղ գիմեն զպրօքական առողջապահութեան, այն ժամանակ շատ բան կը պարզուի :

Գիտեմ, թւանշանների ու քննութիւնների կողմնակիցները ո՛չ մի կերպ չեն կարող հաշուել այն մտքի հետ, թէ առանց թւանշանների առանց քննութիւնների կարելի է զպրօք կառավարել, կ՛րելի եւ հնարաւոր է առանց դրանց ապահով լինել : Թէ զպրօքականները կարող են կեանքի համար պատրաստուել և մի բան տանել զպրօքից : Գրանց հայեացքը շատ նման է կաթուղիկ եկեղեցու այն հայեացքին, որ ստուծ

Այս յանցանքը մեծ մասամբ մեր ազգայնականներուն կը պատկանի . որոնք անպիտակ իրենց նորիական պայտօնին նախ իրենք խաղաղիք կը դառնան կարգ մը խարբրանքներու , եւ ապա , ինչ որ ամենէն ցաւալին է , մեր եկեղեցւոյն արարողութիւնները խաղաղիք կը դարձնեն :

Դեռ յատկապէս քաջնք ազգայնականներու ձեռքէն . իրաւ որ անասանելի են :

Պատահական Թղթակից

ՌՈՒՍԱՅ ԻՒՍԱՆՈՂԱԿԱՆ Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ Ն Ե Ր Ը

Ա.

Լայնածառայ է ուսուց պատեթիւնը . 180 միլիոնի է հասնում նրա բնակիչները թիւը . սակայն մատաներով կարելի է հաշուել նրա բարձրագոյն դպրոցները : Եւրոպայում մի քանի մասնագիտական բարձրագոյն հիմնարկութիւններ եւ ուրիշ ոչինչ :

Բայց եթէ եղածն էլ իր կոչման ու նպատակին համապատասխանող վիճակ ունենար . այն ժամանակ միլիարդական կը լինէր : Սակայն դառն իրողութիւնը ցոյց է տալիս բոլորովին հակառակը :

Ռուսական բոլոր դպրոցներում տիրում է նոյն չինովիկական ոգին . նոյն բռնակալական սխտէմը , ինչ որ բոլոր միւս հիմնարկութիւններում : Արտաքին փայլ , ձեւակերպութիւն եւ ներքին դատարկութիւն — ահա դրանց գլխաւոր յատկանիշները :

Կոտորածութիւնը միշտ աշխատում է այս կամ այն բարձրագոյն դպրոցի ուսանողներին համար առանձին համազգեստ — անշուշտ փայլուն ուսուցիչներով , պապողեն կոճակներով — սահմանել , բայց շատ քիչ է մտածում նրանց աշխարհայեցողքն ընդլայնելու , մտաւոր սնունդն աւելա-

ցնելու կամ բարելաւելու մասին : Ընդհակառակը նորանոր նախարարական հրահանգներով աւելի ու աւելի ճնշում է ուսանողների անհատականութեանը , աշխատում է խեղդել ամեն մի ազատամտ փորձ կամ ցանկութիւն :

— Հագիր ուսանողական մտեղիք , տուր ձեւական քննութիւնները եւ աւարտման «եարկէն» (իմա տիպոյում) ստանալով սուսիկ փուսիկ հեռացիր : — Ահա այդ է ուսուսանողի կատարելիքները :

Եթէ նա դրանից հետոն դնայ , խստիւ կը պատժուի . արձակման ու արտոնման կարճաժամանակ :

Թող ամենուրեք (նոյնիսկ դպրոցական պատերի մէջ) տիրէ միահեծան բռնակալութիւնը , թող տողովուրդը հեծէ խաւարի ու ճնշման լծի տակ . թող արդարութիւնն ու ճշմարտութիւնը բռնակալութիւնը չհանձնուի կողմից — ուսուսանողը բողոքելու , զիմադրելու , ակնարկ միջոցներ ձեռք առնելու իրաւունք չունի , եթէ չի ուզում բանտի խորքերում իր շահի կեանքը մաշել :

Այդպիսի պայմաններում , այդպիսի միջոցներում իսոքա անգամ չի կարող լինել գոհունակութեան մտայն : Տիրող կարգերից զժգոհ են թէ ուսանողները եւ թէ՛ պրոֆեսորները քիչ շատերը :

Դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը , որ պրոֆեսորներից ոմանք (Օր. Իսայեւ [՝] , Կարէեւ , Տուզան — Բարանովսկի , Գամբարով եւն .) , կամովին հեռացան պայտօնից , չուզեցին յարկ տուլ իրենց խօսքը մտնակի ու քննութեան միացնել . . .

Իսկ ուսանողները . . . Ի՞նչ կարող են անել նրանք : Հեռանալ , արտասահմանում սովորել անկարող են շատ ու շատ պատճառներով . դրանցից գլխաւորն այն է , որ նրանք առանց յիշեալ «եարկէկ» (տիպոյում) Ռուսիայում պաշտօն ունենալու :

[՝] նա այժմ Բրեսլայի համալսարանում է դասախօսում :

նայ չեն կարող : Հացի խնդիրը կարգու կարգի մտածանք բարձրագոյն դպրոցի հետ . նրանք (ի հարկէ ընդհանուր առմամբ) մտնում են այդ տեղ ո՛չ այնքան դիտութիւն ձեռք բերելու , որքան այդ չարաբաստիկ «եարկէկ» ստանալու համար : Մնացածը , ոչ գրաւում է եւ ոչ հետաքրքրում նրանց :

Ռուս ուսանողները հայտնում են այդ գրութեան հետ , բայց միեւնոյն ժամանակ սրտի խորքում պահում են ստեղծութեան թոյնը , դժգոհութեան գոտն զգացմունքը զէպի տիրող կարգերը : Ահա այդ թոյնը , այդ զգացմունքն է , որ ամեն մի յարմար առիթից օգտուելով , ցոյց է տալիս իր ոյժը եւ առաջացնում այսպէս անւանեալ «ուսանողական խռոնակութիւն» . . .

Իսկ այդպիսի առիթները , փառք Ալլախին , երբեք չեն դանդաղում , որովհետեւ ուսանողական բռնակալութիւնը այնքան էլ քաղաքազէտ ու հեռաժամ չէ : Բայց զոտնանք փաստերին :

Բ.

Ռուսաց ուսանողական շարժումներն աւելի յաճախ կրկնուել եւ զօրեղ նշանակութիւն են ստացել զըլխաւորապէս վերջին տասնամակում : Եթէ չեմ սխալուում 1895 թւի երկու շարժի էր , որ տեղի ունեցաւ առաջին մեծ շարժումը : Պատճառը հետեւեալն էր :

Ոստիկանութիւնն իր աւանդական սովորութեան համեմատ պարբերական խուզարկութիւններ կատարելով , ձերբակալում է ի միջի այլոց մի քանի ուսանողներին եւ մի ուսանողուհու : Դրանք մեղադրուում են բանւորական շարժմանը եւ ընդհանրապէս հակակոտորակական ընկերութիւններին մասնակցելու մէջ . . . Սկսում է անվերջ հարց ու փորձ , նորանոր խուզարկութիւններ եւն : Այդպէս անցնում են օրեր , ամբողջ շաբաթներ . . . Յանկարծ լուր է տա-

րածում , թէ ուսանողուհին բանտի մէջ ինքնասպանութիւն է գործել : Փաստերն հաստատում են յուրը եւ լոյս աշխարհ բերում հետեւեալ սարսափելի եղանակներով թիւերը . . .

— Պետրո-Պաւլովսկի բանտի իտնաւ խուցերից մէկում միայնակ փակուած է դատապարտեալ ուսանողուհին : նա ընկճւած չէ , նա ազատհամարձակ պատասխանում է առաջարկած բոլոր հարցերին . առանց վախենալու արտայայտում է իր բուն համակրանքը , զէպի բոլոր ճնշւած ու հալածւածները . . .

Այդպիսի վարմունքը սեռական գեղեցկութեան հետ միացած զբաւում է բանտապետի ու շարժութիւնը : նա վճռում է յարկ տուլ այդ իր անասանական սովորներն եւ մի զեղեցիկ օր , բանտարկեալի խոցը մանկելով , բրոնաբարում է անմեղ կոյսին .

Բռնաբարութիւն , ինչ սարսափելի հարւած մի մաքուր ու անարատ օրիորդի համար . . .

Սիդնի ու պատիւը , զգանքն ու զայրոյթն իրար ձեռ միացած , տիրում են նրան ինքնասպանութիւն գործելու մտնում է նա . սրպէս զի իր արատաւորում պատիւը լոյս աշխարհ չի հանէ . . . Եւ այս ամենը կատարում է մայրաքաղաքում — Պետերբուրգում , արքունիքից միայն մի քանի քայլ հեռու . . . Հապա ինչեր են լինում աչքից հեռացած , մաքից մոռացւած անկիւններում :

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Թէոփոսիայէն կը գրեն որ Դեկտ. 1 սկիզբները Ս. Խաչ վանքը եկաւ արժ . նահապետ վրդ . նահապետեան իբրեւ վանահայր հանգուցեալ Խորէն եպիսկոպոս Ստեփանէի տեղ , Կոնստանտնուպոլի կարգադրութեան համաձայն ,

Տիգրան Ռաշիւնեան

(Շարունակելի)

է . — «Արտաքոյ Հոռոմեական եկեղեցւոյ չիք փրկութիւն» . մեր այդ կարգի մանկավարժներն էլ մտածում են այսպէս . — Երտաքոյ թւանշաններին եւ քննութիւններին չիք կրթութիւն : — Այդ ստում եւ հէնց պարոն Սամուէլ Բալաղեանի ընդգծւած խօսքերի եւ այս պարբերութեան լրա «Դրանով է բացատրվում , որ չնայած այդ միջոցների (հասկացիք թւանշան ու քննութիւն) ակներեւ պակասութիւններին , դրանք առ այժմ գործ են դնում ամբողջ Ռուսաստանի միջնակարգ դպրոցներում» : Սրանով հաստատում է , որ ինչքան էլ պակասաւոր է այդ դրութիւնը , առ այժմ չի կարելի առանց դրան եօսա դալ : Այսպէս է մտածում ոչ միայն պարոն Բալաղեանը , այլ նրա նման հազարաւորներ եւ գուցէ աւելի ծայրայեղ կերպով : Բայց ինչո՞ւ . ի՞նչ հիման վրայ առանց քննութիւնների ու թւանշանների չեն կարող գործել դպրոցները . դա էլ մի հանելուկ է եւ բացատրութեան կարօտ :

Անցնենք նոյնիսկ փաստերին , թէ արդեօք հնարաւոր չէ՞ ստանց յրնուութիւնների , առանց թւանշանների դպրոց կառավարել :

II

Երեւում յիշած Թաւրիզի Լիւրաւ

թաղի «Հայկազեան» եւ «Թամարեան» երկուսն դպրոցներում 1898—99 ուսումնական տարում քննութիւններ չեղան . քննութիւն չեղաւ նոյնպէս 1899—1900 ուսումնական տարում : Սկզբից այսինքն 1898—1899 ուսումնական տարում երբ քննութիւններ ու թւանշաններ ոչնչացան , սրանց երկրպագու աւանդապահները զէս ու զէն խօսում առում էին , թէ ապակերտ — աշակերտուհիները էլ բուն չեն սովորի , քանի որ ո՛չ թւանշաններ կան եւ ո՛չ էլ քննութիւններ : Տեսնենք արդեօք երկու տարւայ վորձերն այդ եւն ապացուցանում , թէ բոլորովին հակառակը :

Միանգամայն հակառակ եմ այն կարծիքին , թէ դպրոց մտնողները առաջի տարւանից միջնակարգ վերջին տարին ինչ որ թւանշանների ու քննութիւնների համար են սովորում , դա եթէ այդպէս լինէր , այն ժամանակ անհատի մէջ կը նշանակէ գոյութիւն չպիտի ունենար բնական հետաքրքրութիւն՝ սովորել , առաջ գնալ . այն ինչ մեզանից իւրաքանչիւրը գիտէ եւ անսած է երեխայի բնական հետաքրքրութիւնը , հարցաւորութիւնը . սա վերաբերում է պատանուն , երիտասարդին եւ այլն՝ աւելի լայն չափով : Մտաւոր կրթութեան նկատմամբ հէնց այս բնական

նեւստիքներուսն է որ դպրոցը պիտի ուղղութիւն տայ , բազմակողմանի դարձնէ : Մեր ամբողջ մտաւոր զարգացումը , հասկացողութիւնը (ուղում է ք խելք , բանականութիւնն առաջէք) մի շարք մտապակերտներ ու նրանց կապակցութիւնն է : Դրա համար էլ դատաւորն (ուսուցիչ , վարժուհի) դպրոցականին նոր մտապակերտներ տալիս պէտք է անպատճառ իսկական ստարկան ներկայացնէ , եթէ հնարաւոր է , իսկ եթէ ոչ՝ գոնէ ծանօթ մտապակերտով կամ ծանօթ առարկայով հասկանալի դարձնէ . օրինակ , եթէ անտառ չտեսած դպրոցականին պիտի գաղափար տալ նրա մասին , լաւ է մի այդի կամ մի ծառաստան յոյց տալ , ապա թէ ասել անտառը ինչպիսի բուն է : Նոյն տեսակ պիտի գաղափար տալ փոքր ջրերով՝ ծովերի , լճերի մասին եւ այլն : Մի խօսքով դատաւարութիւնը պիտի լինի առարկայական (կոնկրետ) . այս բանը անխտիր վերաբերում է բոլոր առարկաներին : Այդ պատճառով Լիւրաւ թաղի «Հայկազեան» ու «Թամարեան» երկուսն դպրոցներում նոյն մեթոդը իրականացնելու համար եղել են աշակերտական զբօսանքներ , թէ՛ տարածութեան , թէ՛ չափերի , թէ՛ աշխարհագրական այլ եւ այլ տեղեկութիւնների մասին կենդանի

կերպով գաղափար տալու համար : Առարկայական ուսուցման միւս կողմն էլ այն է , որ ամեն մի եզրակացութիւն , ամեն նոր բան՝ սուած փաստերի հիման վրա՝ աշակերտ — աշակերտուհիներն իրանք պէտք է գտնեն , ուսուցման ամբողջ ընթացքում նրանք են զիտերը անելու . օրինակ , հէնց ասենք , որ դպրոցականները պիտի սովորեն քաղաքապետի զուլաւորութիւնը , պարզ է , որ նրանք կսկսեն (բանաւոր կերպով) հարկերներին , տասնկրից եւ այլն . սրա վրա բանաւոր ու գրաւոր վարժութիւններ անել աւելց յետոյ , ուսուցիչը հարց պիտի տայ , թէ ո՞վ կարող է ուրիշ տեսակ գումարել , կնկատուած , կը գտնուին , որ պատասխանեն , թէ կարելի է գումարել նաեւ միաւորներին . սրա վրա էլ վարժութիւններ կատարելուց յետոյ՝ ուսուցչի հարցով նրանք պիտի կ գտնեն այն կրթականութեան , քի քերք կարելի է գումարել երկու կողմից էլ , բայց շարունակութեան հետեւ պիտի գումարել միաւորներին :

հանգուցեալ սրբազանի գոյքը պիտի ուղարկուի Քիչնեւ այնտեղէն Ս. Էջմիածին :

— Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը առաջարկած է որ գաւառներէն եկած որբերէն չորսը որոնք չափահաս են այլեւս, իրենց տեղերը տարուին : Բանաւոր գատուեր է ներկայացուած առաջարկը և որոշուեր է գարնան իրենց գաւառները դարձնել յիշեալ որբերը, նախապէս իրենց գաւառներուն առաջնորդներէն տեղեկութիւն ուզելով թէ այդ որբերը ինչ միջոցներով պիտի կրնան իրենց ապրուստն ու ապագան հոգալ :

— Բեթերսպուր կապրոզ հայերու մէջ մտադրութիւն կայ ընկերութիւն մը հիմնել, նպատակ ունենալով Ռուսիա ապրող հայերու մէջ ուսումը տարածելու : Այդ ընկերութեան գործելու գլխաւոր ասպարէզը կովկասը պիտի ըլլայ, և այն տեսակ զբոսայրոցներ պիտի բացուին, որոնց մէջ հայ աշակերտները կարողանան բացի ուսուցանելէն սորվել նաեւ իրենց մայրենի լեզուն : Ընկերութեան ծրագիրը 2—3 ամիսէն կառավարութեան պիտի ներկայացուի :

ՎրիՊԱԿ. — 290 թիւ Շարժումի նախադրումին Ա. սիւնակին մէջ, անօգուտ գործերուն պէտք է կարգալ «անօգուտ գործիներու» :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Օր. Ս. Եան, Գայաճըզ. — Ստացանք ձեր գրութիւնը. բայց կը կարծենք թէ աւելորդ է այդ կարգի հրատարակութիւններով զբաղիլ : «Շաքէ»ի անդամութիւններուն հետ յարաբերութիւն ունեցող ամէն անհատ գիտէ թէ, բացի Աստարճեաններու զրկած 25 լէվէն, ուրիշ 25 լէվ ալ «Շաքէ»ի անդամութիւններէն մէկը զրկած է : Իսկ եթէ Յ. Աստարճեան պատանին կը կարծէ թէ միայն իր հօրը սնտուկէն կրնայ 25 ֆր. ելլել աղքատին համար, սա ալ իր միութեանը թող ըլլայ :

— Յակոբ Պերպերեան, Լին. — Ձեր բոլոր նամակները ստացած ենք : Շնորհակալ ենք որ կուզէք օգտակար ըլլալ Շարժումի :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռ Ո Ւ Ր Ք Ի Ս

«Տէլլի թէլէկրաֆ»ի Պոլսոյ թղթակիցը կրտս որ, Սուլթանը հեռագրած է Մէքքէի էմիրին թէ անհամբեր կը սպասէ Հիճազի երկաթուղւոյն զմին աւարման, զէպի Սրբազան քաղաքը ուխտագնացութիւն մը կատարելու համար :

— Գահիրէի մէջ և շրջակայքը տհեզ փոթորիկ մը ծագեր և մե-

ծամեծ վնասներ պատճառուեր է. երկաթուղիներու գիծը շատ տեղէ քանդուեր, հարիւրաւոր տուններ փլեր, քանի մը գիւղեր ալ հիմնայատակ կործաներ են :

— Ռուս և Հելլէն կառավարութիւնները նորէն քարանթիւնա սահմանցին Իլմիրի ժամանումներուն դէմ :

— Կրէտէն Իլմիր գաղթող թիւրքերէն եթէ հոգի արբեւալով հրապարակի մարդոց վրայ մերկ սուրերով յարձակեր և մէկ քանիներ ալ վիրաւորեր են : Ոստիկանութեանը հասնելով ձերբակալեր է չարագործները :

Ռ Ո Ւ Մ Ո Ւ Ա

Պաքուէն իր գրեն թէ նախ ժմերանոցներուն հրդեհը մարեր է 10 տուն, 5 մթերանոց, 35 միլիոն բող նախ ոչնչացած են : Կարուսը 6 միլիոն բող պիլ կը հաշուուի :

Փլատակներու քրքրումը սկըսուած է. 160 մարդ վիրաւորուեր են, 6 հոգի այրեր և 41 հոգի ծանրապէս վիրաւորուեր են, նաւային ընկերութիւնը յանձնախումբ մը կազմեր է մարդոց և ինչքերու կորուստը նշանակելու և անպատասպար մնացած ընտանիքները խնամելու համար, որոնք շրջակայ քաղաքները փոխադրուեր են առժամապէս :

— Փէնէրալ Տրակոմիրով Քիէվի, Բոսովի և Վոլինիի գլխաւոր կառավարիչը ամենախիստ միջոցներ ձեռք առած է Քիէվի մէջ անկարգութիւններ սարքողներուն դէմ : Ոստիկանութիւնը հրահանգ ստացած է ձերբակալել բոլոր այն անձերը որոնք համախումբաբար կը կազմեն, եթէ մերժեն ցրուիլ : Ի հարկին զօրքին օգնութեան ալ պիտի դիմուի, որ իրաւունք պիտի ունենայ նոյնիսկ զէնքի դիմելու :

Չ Ի Ն Ա Ս Ս Ա Ն

Չինական աղբիւրէ եկած լուրի մը համաձայն կայսրուհին տրամադրու է եղբւր իշխանութիւնէ հեռանալու, սակայն բարձրաստիճան պաշտօնեայ մը կը ստիպէ եղբւր զինքը անձամբ վարել առաջարկուած բարենորոգմանց գործը, որպէս զի 1898ի կացութիւնը չըլլայ թէ կրկնուի :

— Կը կարծուի թէ Թաքուի նաւահանգիստը այս տարի աւելի կանուխ սառնէ պիտի ազատի թեբեւս 15 օրէն : Նաւահանգիստը բացուածին պէս, Վալտեր զէ հիւսիսային Չինաստանէն պիտի մեկնի :

— Հակաօտարական շարժման դէմ կեցած ըլլալուն համար, կայսրուհւոյն հրամանով գըլխատուած Լու Սէնի ընտանիքը

դեպքաններուն գրութիւն մը ներկայացուցեր է, ուր կը բողոքէ միսիօնար Հայր Ֆալիէի դէմ, որ Փէքիի գրաւման յաջորդօրը, կողոպտած էր ամբողջ տունը, մօտ մէկ միլիոն թաէլ արժողութեամբ դրամ և թանկագին իրեղէններ տանելով, Կինը կը տեղեկացնէ թէ այդ իրեղէնները ամերիկեան դեպքանատան Բ. քարտուղարին մօտ պահուած են, որ կը պատրաստուի երկրէն դուրս հանել զայն : «Եթէ կողոպուտի մասին ցարդ լուսածնութիւն տասնէն մէկն ալ ճիշդ եղած ըլլայ, կը գրէ «Երկուօրք Հերալտ, դարձեալ քրիստոնէութիւնը ամօթէն պէտք է կարմրի» :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Արեւելեան Թրանսպալի մէջ, Ամսթերտամի մօտերը 6000 զինեալ պօստեր երեւան ելեր են : Անոնցմէ 400ի չափ գունա մը յարձակեր է Բրէթօրիայէն նախազգացող սուրհանդակ կառավարին վրայ : Կնդրական զօրքերը կրակ ըրեր են պօստերու վրայ, պրեթէ բոլոր ճամբորդները վիրաւորուեր են, պօստները թղթատարական բոլոր պարկերը կողոպտուեր են, ինչպէս նաեւ ճամբորդներուն դրամը և զգեստները : Թուրքերու մէջ կան եղբւր նաեւ կարեւոր ասօքիւմաններ գերմանական հիւպատոսարանէն գրուած :

— Լօրտ Ռոպէրթս ընդարձակ տեղեկագրով մը կը քննադատէ անգլիական բանակին դերի կազմակերպութիւնը, փոխադրութեան միջոցներուն անբաւականութիւնը, զինուորներուն յոռի վիճակը և անհրաժեշտ բարենորոգումներ կառավարիչէ :

— Ֆրանքֆորթի մէջ (Գերմանիա) մեծ միթիւնկ մը տեղի ունեցեր է ի նպատակ պօստերուն : Ուրիշ երկու միթիւնկներ ալ նմանապէս ի նպատակ պօստերուն տեղի ունեցեր են Աւստրիոյ Լիւտվիլիզաֆէն և Ռայխէնպէրկ քաղաքներուն մէջ :

— Խաղաղութեան յանձնախումբ մը որուն կը մասնակցի եղբւր նաեւ Ժուպէր զօրավարի որդին, Պօթայի կողմը ուղղեր է, որով կը հրաւիրէ զօրավարը այլեւս զէնքը թողուլ և հպատակութիւն յայտնել, առարկելով թէ իր հայրենակիցներէն հազարաւորներ աքսորի մէջ են, թէ երկիրը հետզհետէ աւելի կամայանայ, թէ Անգլիան 80 միլիոն սթերլին ծախսեց և այնքան կեանք վրայ տուաւ, և նոյնքան ալ զոհելու դեռ պատրաստ է ու երբէք միտք չունի երկու հանրապետութեանց անկախութիւն տալու :

Միւս կողմէ Ռոպէրթսըն գա-

ւառին մէջ ազարակապաններու մեծ համախմբում մը պատուիրակութիւն մը զրկած է Միլիոնէրի վճռապէս յայտնելով թէ որոշած են բողոքել զինաթափութեան դէմ և չի պիտի ընդունին անգլիական զօրքերը :

Պատերազմական օրէնքին հրատարակումը սաստիկ ատելութիւն մը յարուցած է ամերիկացիներու մէջ բոլոր այն բաներու մասին որոնք անգլիական են :

Ս Պ Ա Ն Ի Ա

Սպանիական համալսարանական ուսանողները նոր ցոյցեր ըրեր են կղերականներու դէմ, ճիզվիթներու շէնքին առջեւ : Յոյցարարները սուլեր և քարեր տեղացեր են ներքին գործոց նախարարին վրայ, կտրուով անցած ատեն : Յոյցերը տասը ժամ տեւեր են, մինչեւ կէս գիշեր, և բազմաթիւ ընդհարումներ տեղի ունեցեր են ոստիկաններու և ցոյցարարներուն միջեւ : Այս վերջիններու թիւը մինչեւ 2000ի հասեր է, որոնք զանազան կողմեր բաժնուելով ճիզուիթներու տուններուն ապակիները սկսեր են կոտորել : Ոստիկանութիւնը ստիպուեր է զէնքի դիմել : Յոյցարարներէն մէկ քանին ծրար մը պայթուցիկ զետեղեր են մեծ տան մը գետնայարկին պատուհանին առջեւ, որուն պայթումը խռովութեանց սաստկանալուն պատճառ եղեր է : Ուրիշ քաղաքներու մէջ ալ նմանօրինակ ցոյցեր տեղի ունեցեր են :

Ներքին լուրերը և Սերպիոյ թաղաւորին մահը կարգալ տաճկերէն «Յաւելուած»ին մէջ :

ԱՌՈՂՁԱՊԱՀԻԿ ՄԻՓՈՑ ՄԸՆ ԱԼ

Եթէ կուզէք կործարել եւ շնչառութեան զանազան տեսակ հիւանդութիւններէ զերծ մնալ, ձխեցէք Ազգ. Հիւանդանոցի Ս. Փրկչի սիկարիթուղթը : Պատրաստուած է այս անգամ Հիւանդանոցի Պատ. Հոգաբարձութեան յատուկ խնամքով, ֆրանսական առաջին տեսակ թուղթէ : Ինչպէս չորս տարիէ ի վեր Պուլկարիոյ միակ մասնաճիւղը եղած եմ, եւ ինչպէս Շարժումի ազնիւ ընթերցողաց ծանօթ է. մէկէ աւելի անգամներ յայտարարած եմ, անգամ մը եւս կուզամ յարգոյ յաճութորդներու յայտարարել թէ, ի նորոյ գաղղիական, Կ. Պոլսոյ եւ տեղական բնաւոր տեսակ թուղթերու հետ նոյնպէս Ազգ. Հիւանդանոցի առաջին տեսակ թուղթէն մեծաքանակ բերել տուած եմ : Յանձնարարութիւնք փութով եւ ճշդիւ կը կատարուին, միայն գիշերը կանխիկ, Գիւնի թիւ 51, Ուղու Չարչի Փ. Պոլիս ՏԻԳՐԱՆ Յ. ՏՈՒՄԱՆԱՆ 3—5

Отговорникъ: Д-ръ МХГХРДИЧЪ ВАРТАНЪ Печ. «Взаимность» — Варна.